

1955 ԹՎԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՆՅՈՒ-ՅՈՐՔՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԵԼ Է ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ: ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՂԵԼ Է ԻՐ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՂՋՈՒՅՆԸ ԹԵՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ:

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆԻՆ

ՆՅՈՒ-ՅՈՐՔ

Տիրախնամ թեմիդ պատգամավորական ժողովի գումարման առթիվ ընդունեցեք Մեր սիրո ջերմագին ողջույնը և օրհնությունը հայրապետական Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն ուղղյալ Ձեզդ Գերապատվության, մեր սիրեցյալ հոգևորական դասուն, պատգամավորական ժողովո բոլոր հարգարժան անդամներուն և համայն մեր հավատացյալ ու հայրենաբաղձ ժողովուրդին, մաղթելով բոլորիդ ի Տյառնե քաջառողջ կյանք, ուժ և կարողություն և եկեղեցանվեր գործոց հաջողություն ի Քրիստոս սիրով և ազգային միասնությամբ:

Շնորհք և խաղաղություն Տյառն մերո Հիսուսի Քրիստոսի ընդ Ձեզ:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՐԱՄԱՆՈՎ Տ. ԶԳՈՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ԲԱՂԴԱԴԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ

ԶԳՈՆ Ծ. ՎՐԴ. ՏԵՐ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՄԻԼԱՆ

Մտահոգված ըլլալով թափուր թեմերու հարցով (և հիմնված Ձեր համաձայնության վրա) կառաջարկենք Ձեզ Ծննդյան տոներեն առաջ մեկնիլ Բաղդադ որպես Կաթողիկոսական պատվիրակ մեր կողմե լիազորված և կազմակերպել Իրաքի թեմը: Կուղարկվի լիազորագիր նամակը:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ